

23r-31r

ԳԼՈՒԽ Զ. Յաղագս վաճառականութեանն ի Կոստանդինուպոլիս սկսեալ յամէ 1742 ի մայիս ամսոյն մինչեւ ի 1749: Մինչեւ էր քաջ տեղեակ արհեստին եւ թէ ռ՞րպիսի յաջողութեամբ յառաջացաւ եւ թէ ռ՞րպիսի մեծ ընտանութեամբ իբր որդեգիր սիրելի եղեւ յաչս Յակոբայ պատրիարգի Նալեան...:

27v-28r միջեւ
թերթիկի վրայ՝

յատուկ նշանով լրացուած է էջ 44-ի տեքստը «Յայտ եւ ի սոյն ամ 1746 պատրիարքն Հայոց Յակոբ վարդապետ Նալեան» բառերից յետոյ՝
- բազում թոյլտուութիւնս ետ ուղղափառաց եւ նոքա եւս, քան զարժանն համարձակեալ, անցին ըստ չափ, մինչեւ սկսան քահանայք նոցին զթաղումն իսկ առնել մեռելոց. որպէս եւ ի միտմնուագի խարզցի Յակոբ վարդապետն, որ ի Փրօքականտայէ եւ Շերպէթնի Օղլու Տէր Սերգիսն եւ Տիպանի Օղլու Տէր Սերգիսն (այն, որ յառաջագոյն ի Հայոց քահանայից անտի էր եւ ապա յուղղափառութիւն եկեալ, դիմեաց ի Հռովմ, ակնկալութեամբ վարձս ընդունելոյ եւ յոչ վարձատրիլն՝ եղեւ ի դարձին չար քան զառաջինն):

31r ստանձնուած եւ
ծալուած թերթիկի
վրայ՝

- Եւ յետ այսորիկ, յամի 1749 ի մարտի 26, որ էր օր Զատիկի, գնեաց Թովմանն զշաքարեղէնս եւ զծաղկունս եւ առեալ երթայր ի շնորհաւորութիւն Սրբոյ Յարութեան առ Ճամպագ Օղլու ազգականն իւր, որ էր փեսայն Նուրի քնոն ...
Իսկ զՅակոբ Նալեան առաքեցին լինել Առաջնորդ ի Պուռսա եւ ապա յղեցին յԵրուսաղէմ, լինիլ անդ Պատրիարգ, ուր եւ եկաց նա ամս երկու, մինչեւ ի գալ անդր յուխտ Նաղուպ աղային, որոյ եղեալ Պատրիարգ Երուսաղէմի զԹորոս վարդապետ, էառ եւ երկր ընդ իւր զՅակոբ վարդապետ եւ կարգեաց զնա վերստին Պատրիարգ Կոստանդինուպոլսոյ յամի 1752, որպէս պատմելոց եմ յիւրում տեղւոց:

31v-37v

ԳԼՈՒԽ Է. Յաղագս ընդ ճանապարհորդութեան յարեւմուտս՝ վասն գնալոյ յուխտ յորեկեան ներդութեան ի Հռովմ, մի ըստ միոջէ նշանակելով զանուանս քաղաքաց եւ գետից եւ գոյալուածս պէտպէս եւ թէ որպէս ի Վիեննա որդեգրեցաւ մուսու տէ Գրանջիի՝ գանձապետի թագուհւոյն: